ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/19

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Դամբայ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Դամբայ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի և Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-7/1» ծածկագրով բաց մրցույթ, լվացքի հավաքման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 25.01.2021թ.-ի թիվ 26/26/792-2021 գրությամբ «Դամբայ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 22.01.2021թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/241-2021 գրության հիման վրա, 25.01.2021թ.-ին «Դամբայ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 25.01.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 25.01.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/19 համարի ծածկագիրը:

03.02.2021թ.-ին, 11.02.2021թ.-ին և 19.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 11.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 19.02.2021թ.-ին:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.01.2021թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/241-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-7/1» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «ԴԱՄԲԱՅ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից):

Մասնակիցը 18.01.2021թ. ներկայացրել է դիմում, ըստ որի, հանդիսանալով Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից, հրաժարվել է նույն չափաբաժնի մասով Ընթացակարգին հետագա մասնակցությունից և պայմանագիր կնքելուց:

Քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն.

«Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը», ուստի 21.01.2021թ., հիմք ընդունելով Մասնակցի կողմից 18.01.2021թ. ներկայացված դիմումը և հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Մասնակցի հայտը Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-7/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Դամբայ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Դամբայ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 25.01.2021թ.-ին գրությամբ դիմել է «Դամբայ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.01.2021թ.-ի թիվ 26/26/792-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

11.02.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ հայտնել է հետևյալը.

««Դամբայ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-7/1» ծածկագրով բաց մրցույթին /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.01.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ <<Դամբայ>> ՍՊԸ-ն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշել՝ անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 7 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ <<Դամբայ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է, քանի որ վերջինիս կողմից ներկայացվել է դիմում, ըստ որի հանդիսանալով Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակիցը հրաժարվել է նույն չափաբաժնի մասով ընթացակարգին հետագա մասնակցությունից և պայմանագիր կնքելուց:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Ինչպես արդեն հայտնել ենք, <<Դամբայ>> ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-7/1» ծածկագրով բաց մրցույթին և Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշել՝ անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 7 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ <<Դամբայ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է, քանի որ վերջինիս կողմից ներկայացվել է դիմում, ըստ որի հանդիսանալով Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակիցը հրաժարվել է նույն չափաբաժնի մասով ընթացակարգին հետագա մասնակցությունից և պայմանագիր կնքելուց:

Եվ այսպես, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է.

2020թ. դեկտեմբեր ամսից սկսված ձյան տեղումների պատճառով ամբողջությամբ կապվածահար էր եղել Լարսի ճանապարհը և անցակետը, ինչով պայմանավորված անհնար էր եղել լվացքատան տեխնիկաների փոխադրումը ՀՀ տարածք /հողումները ստորև/.

https://www.azatutyun.am/a/31046151.html

https://www.armtimes.com/hy/article/204219

https://armenpress.am/arm/news/1041879.html

https://www.civilnet.am/news/2021/01/18/%D4%BC%D5%A1%D6%80%D5%BD%D5%A8-%D6%83%D5%A1%D5%AF-%D5%A7-450-%D5%B4%D5%A5%D6%84%D5%A5%D5%B6%D5%A1-%D5%A7-%D5%AF%D5%B8%D6%82%D5%BF%D5%A1%D5%AF%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%BC%D5%B8%D6%82%D5%BD%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%B8%D5%B2%D5%B4%D5%B8%D6%82%D5%B4/416350

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ ամենից տուժվելու էր ՀՀ ՊՆ-ի կողմից հայտարարված լվացքի ծառայություն և այն, որ ՀՀ ՊՆ-ի կողմից բանավոր զգուշացվել էր, որ ծառայությունը անհրաժեշտ է սկսել դեկտեմբեր ամսից՝ կարիք համարեցինք գրավոր դիմում ներկայացնել գնահատող հանձնաժողովին և ներկայացնել ստեղծված իրավիճակը:

Մինչդեռ դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է ընտրված մասնակից ճանաչվելուց հետո, և որը ՍՊԸ-ն չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Օրինակ՝ այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Ընթացակարգի շրջանակներում պարտավորությունների կատարումը:

Ավելին՝ ՀՀ քաղաքացիական դատվարության օրենքգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե

չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ փվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Գտնում ենք, որ նման փաստական հանգամանքներում <<Դամբայ>> ՍՊԸ-ին չի կարող վերագրվել պայմանագրից կնքելուց հրաժարում, քանի որ դա պայմանավորված է եղել անհաղթահարելի ուշի ազդեցությամբ:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Դամբայ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պայմանագրի կնքումից հրաժարում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2021/19 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից լվացքի հավաքման ծառայությունների ձեռքբերման նպատակով 19.11.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-7/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ),

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Դամբայ» ՍՊԸ-ն:

iii. «Դամբայ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-7/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 12.01.2021թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Դամբայ» ՍՊԸ-ն:

v. 13.01.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր:

vi. 18.01.2021թ.-ին «Դամբայ» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ Ընկերությունը մասնակցելով «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-7/1» ծածկագրով մրցույթին, բանակցությունների արդյունքում ներկայացրել է 37 379 232 ՀՀ դրամ ծառայության գին և տեղեկացրել է, որ նշված չափաբաժնի մասով հրաժարվում է մրցույթի հետագա մասնակցությունից և պայմանագիր կնքելուց, քանի որ Լարսի անցակետի փակ լինելու պատճառով լվացքատան տեխնիկաների ներկրումը հնարավոր չի եղել իրականացնել նախատեսված ժամկետներում:

vii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 21.01.2021թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները և «Դամբայ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը, որոշել է 2-րդ չափաբաժնի մասով մերժել մասնակցի կողմից ներկայացված հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.01.2021թ.-ի թիվ 26/26/792-2021 գրությամբ «Դամբայ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից լվացքի հավաքման ծառայությունների ձեռքբերման նպատակով 19.11.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-7/1» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Դամբայ» ՍՊԸ-ն 18.01.2021թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ մասնակցելով «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-7/1» ծածկագրով մրցույթին, բանակցությունների արդյունքում ներկայացրել է 37 379 232 ՀՀ դրամ ծառայության գին և տեղեկացրել է, որ նշված չափաբաժնի մասով հրաժարվում է մրցույթի հետագա մասնակցությունից և պայմանագիր կնքելուց, քանի որ Լարսի անցակետի փակ լինելու պատճառով լվացքատան տեխնիկաների ներկրումը հնարավոր չի եղել իրականացնել նախատեսված ժամկետներում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները և «Դամբայ» ՍՊԸ-ի վերոնշյալ գրությունը որոշել է 2-րդ չափաբաժնի մասով մերժել մասնակցի հայտը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Դամբայ» ՍՊԸ-ն Հանձնաժողովին ուղղված գրությամբ, հայտերը բացելուց հետո, հրաժարվելով «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-7/1» ծածկագրով գնման գործընթացի հետագա մասնակցությունից, ըստ էության, հրաժարվել է ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելուց:

Ուստի, նման պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.01.2021թ.-ի թիվ 26/26/792-2021 գրությամբ «Դամբայ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/19 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Դամբայ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**